

բօնաւորութենէ , ոչ զքրիստոնեայն ՚ի քրիստոնէալենէ , ոչ զմիայնակեայն ՚ի միայնակեցութենէ և ՚ի մենաստանաց խրեանց , մի արգելոցն զքարովն և զքարովութիւնս նոցա . և մի աւերեսցեն զընակարանս և զգաւառունոցա . և մի մերձեսցին ընչից նոցա ՚ի ժամ կառուցման եկեղեցեաց . մի իւ խեսցենքառնալ զկոչնակայեկեղեցեաց նոցա : Այժմէն հաստատեցի զքարեկարդութիւնս մնալ վասն նոցա . որբ աւերեսցեն զուխտն իմ և նենդեսցեն՝ անցանելով զպառուիրանաւ խմով , այն պիսիքն կործանեն զուխտն Աստուած ային և արժանի լինին մշտնջնաւոր պատմց :

Թագաւոր կամ այլ ոք յազդէն Մուսիմանաց կամ քարեկամից՝ բըսնութեամբ զքրիստոնեայս մի դարձուսցեն ՚ի կրօնս Մուսիմանաց և մի վիճեսցեն ընդ նոսա ՚ի վերայ իրացն հաւատոց , եթէ ոչ քաղցրութեամբ և հանդարտութեամբ պահեսցեն զնոսաա ընդ . հովանեաւ ողորմածութեան խրեանց , վրկելով զնոսա յամենայն տառապանաց և ՚ի վատաց . ուր ուրիք երեւեսցին և բնակեսցին նոքա : Եւ եթէ ազգն նոցա հպատակեալ կարօտացի ընչից վասն շնութեան եկեղեցեաց . մենաստանաց քաղաքական խորհրդոց . վասն դաւառուաց և տանց խրեանց , Մուսիմանիք պարտին օդնելնոցա և այց առնել . տալով նոցա մասն ինչ յանժառանդ ընչից , և այն եւս ոչ ըստ կերպի պարտուց , այլ ըստ կերպի ողորմութեան . և տացեն նոցա խորհուրդ բարի ՚ի գործառնութիւնս նոցա , զի այն է հաճոյ առաջն Աստուածոց և առաջն մարդարէի նորին : Իոկ եթէ ոք նենդեսցէ և այլայլեսցէ զոյս ոււխտ իմ . այնպիսին անհաւատ է և ապստամբ լինի յԱստուածային մարդարէն և զրկեացի յարդեանց նո-

րա . և մարդարէն ընդ նոտ ոչ հաճեացի . զի որք ոչ խցին հաւատարիմք և հնաղանդք ոււխտիս զոր հաստասեալ է իմ , այնպիսիքն զիարդ լինին հնաղանդք Արբոց որդւոցն Ապիթալեսցոց փառաւորելցն . քանզի զորին նա կարգաւորեալ է՝ պարտականութիւն Միւսիմանաց է կատարել . այց առնելով նոցա և ողորմիլ նոցա յամենայն ժամանակ՝ որբան տեւեսցէ աշխարհ մինչեւ ՚ի կատարած աշխարհի : Եւ փառք Արարողին տիեզերաց :

## ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

### ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ

“Արեցէք զմիմեանս . առէ Յիւսուս Քոյսուսու . և այսու ծանիլլք թէ աշակերտ իմ էք ” :

ՄԵՐ հաստատելիք սակաւաթիւ սկզբունքն բաւական են մարդ կային սեռափ Կրօնին . տիեզերք այս կրօնին տաճարն է , ուր ամեն պաշտամունքներ ընդունուած են , ուր պէս պէս ծէսկը րուն զանտղան արարողութեանց ամեն ժողովրդոց հաւատոց եւ վարդապետութեան մէջէն Աւետարանը իւր լինջ նշցլները կը ճառագայթէ :

Վարդապետութե մէջ միութիւնք՝ մարդկային զարմին յառաջաղիմութե ձախող փառասիրութիւնն է միայն : Բարոյականին մէջ միութիւնը երկիրիս վերայ եղողբոլը ժողովրդոց խաղաղաւուք քաղաքակրթութիւնն է : Ուրիմն Տիեզերական կրօնք մը հիմնելու գաղտփարին մէջ բնաւ պատրանք մը շ

կոյ, վասն զի պաշտամնւնք մը, վարդապետութիւն մը չէ, այլ Աստուծոյն և մարդոց սէրն է, այս երինային բարյականի գործովը ամեն հաւատալիք զանելը Յիսուսի Քրիստոսի աշխարհ մը ընծայել էր : Յիսուս Քրիստոս, մարդիկ միմիայն պաշտամնոց մէջ ժողովելու չէ եկած, այլ միայն Աստուծոյ առնել՝ ըստ իւր երկրագելի բանին, «Զողորմութիւն կամիմ և ոչ զզո՞ն» : Նաև ով որ Աստուած կը սիրէ իրրեւ հայր և մարդիկ իրրեւ եղացը, ով որ թշնամեաց ձեռք կը կարկառէ, և իր հալածովները կ'օրհնէ, հեթանոս ըլլայ հերձուածող ըլլայ, կրնայ Քրիստոսի աշակերտ անուանիլ, ահաւանիկ ինչպէս աշխարհը քաղաքակրթելու համար Աւետարանը գրուած է, նա տաճարները չպիսի կործանէ, այլ մարդիկ պիտի ամոքէ, հաւատալիք ները չպիտի հարուածէ, այլ ազգաց խորհուրդ մը պիտի տայ : Միայն ջանացէք որ իր բարոյականը բարբարոսաց սրտին մէջ թափանցի, պիտի տեսնաք նյն հետայն բազմակինութեան, ներբինացման, ցեղի, գերութեան և բռնակալութեան, որ մարդոց նախատինքն է, և մոլեռանդութեան, որ առ Աստուած տգիտութիւնն է, բարձումն և շինումն : Եթէ այս ամեն գարշութիւնք ընջուած ըլլան, այն ատեն կը ռապացը ի՞նչ պիտի գառնան :

### Քրիստոնեայ :

Եւ Յիսուսի Քրիստոսի բոլոր խորհուրդը հսկ կայանայ, եթէ ու զեր կրօնք մը ստեղծել, Մալսէսին պէս կը սկսէր վարդապետութիւնք ծէս և արարողութիւնք սորվեցնել ժողովուրդ հարուածող միակ իրեր :

Արդ, Աւետարանը բարոյականի մը օրինադիբը մ' է և ոչ Մաշտոց, ըլկոյ ընաւ պաշտամնունք եւ ոչ մին մեր դաշնախորհուրդիներէն յայտնուած,

ինչնու, վասն զի Քրիստոս կրօնք հիմնելու համար չէ եկած, այլ կանոնաւորելու : Զրապարտեցէք, իր ուսուցմունքն որչափ որ կ'ուղէք, նա երբէք բան մը ըստաւ որ կարենայ համարակութիւն մը շղոմել, աղանդի մը հածանալ կամ ազգերը բաժանել, իր վարդապետութիւնք ամեն կլիմայի կը պատկանի, մարդկային աղգը կ'ընդգրիէ, նա որ և է հաւատալիք մը ըլպարաւեր, որ և է կառավարութիւն մը ըլքննադատեր, այլ իր բարոյականը կը հիմնէ, և ամեն մարդիկ ՚ի սէր Աստուծոյ եւ ընկերին կը հրաւիրէ, մարդկութեան վերայ ծանրացող ամեն չարեաց միակ գարման եղող սկզբան ակնկալելով, ինքը փոխելու վրայ բը նաւ չը խօսիր, այլ ամեն ինչ իրմով փոխեցաւ :

Ամենէն ազգու դիտողութիւն ընելու համար միայն մէկ գործ՝ գերութիւն յառաջ բերենք, ատեն մը մարդը վաճառք մի էր և իրրեւ գրաստի վաճառատուն կը տարուէր : Յիսուս Քրիստոս միայն այս գժիսային շահագիւտութեան գէմ որոտաց, թէ ազգերը բարբարոսութիւն քող պատռելու հրաւիրեց, առանց հասկնալու անոր մասիկ ըրին, սովորութիւն ընդհանուրէր, կուրութիւն զանի իրաւանց վերածած էր : զարմանալիք բան, Աստուած մէղքին վրայ կը լռէ, բայց մարդկային սեռին հանուր եղացրութիւն մը կը հաստատէ . «ԴՈՒՔ ԱՄԵՆԵՎԻՆ ԵՂԲԱՐՔ է՞՞ » . որչափ որ այս Ճշմարտութեան ոգին քաղաքակրթեալ աշխարհին ըլլագալի կ'ըլլար, այնչափ գերութիւնն աներեւոյթ կ'ըլլար : Մեծամեծ յեղափոխութիները միայն մեծամեծ ճըշմարտութեանց լուսով տեղի կ'ունենան :

Ուրիշն Յիսուսէ Քրիստոսէ գըծուած ընթանցքը մէկ հատիկ է, որ աշ-

իսորհը վերանագելու կարող կը ըստ, պէտք է սկզբունքը հաստատել առանց նախադաշտութեան ու որուն պաշտպան է ժաղավարդը, այլ սպասել ժամանակին և Տիեզերական բանին: Ճշնրառութիւնը յամի և առ տիճանաբար ստութիւնը կը չնշէ, ինչ պէտք արշավոր խառարը: Յետին զի տաղութիւն մը և կը վերջացնեմ, բար բարօս Արեւմուտը բարցականը ընդունելուն առաջ վարդապետութիւնը ընդունեց, երկար ատեն ալ բարբարա մնաց: Այսօր իր ճակատագիրը փոխուած է եւ պէտք է ըսել թէ Աւետարանին փիլիսոփայական լուսով քալպակիթութեան եւ ազատութեան հասաւ:

Փորձառութենէն օգուտ քաղենք, և Աւետարանին ամենացշմարիտ հոգին երկրագնդին զգացնել կու առ իբրեւ առաջնորդ և անուշ հողմիկ, որ Արեւմուտքէն յԱրեւելու կը չնշէ կենաւառու անձրեւ մը, որ երաշտ երկիրին արդաւանդութիւն և վերակենագոնաւթիւն կը պարգեւէ:

Օ՞ն ուրեմն, Աւետարանին ողին թող մեր առաջնորդն ըլլաց և ոչ ծէս և արարողութիւն, որ ազգաց բաժանման կուռոց և ատելութեան նիւթ են դարձեր սոսկապէս: Աւետարանը սիրոց և միաւթեան միակ ձուլորանն է, եւ անդ ողեաք է յանդի մեր իղձը և տենչն և անդ է միայն մեր պասկն անթարշամի:

Էմի Մարմէն Թարգ. .  
Զատար Մ. Համբարյան-Խեան,  
Ո-խառար: յԵրաւանյալ:

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՑ ԳՈԹԱՅԻՑ

Այս անգամ մեր լինմէրցողաց ու շաղրութիւնը դարձնում ենք աեւզայս վարժուհեաց սեմինարի վերաց: Մեր անձնական հայեացքներն այս ու սումնարանի մասին յստ ունենք ուրիշ ժամանակ մանրամասնորին յայտնել ընթերցող հասարակութեան, առ այժմ կամենում ենք ծանօթացնել մեր Հայ կանանց այս ուսումնարանի ծրագրին: Համարձակ կարող ենք ներկացնել այս հիմնարկութիւնը իբրեւ բաւական օգտաւէտ այն մասնուղ կանանց և օրիորդներին, ողանք կամենում են սովորել երեխայական հասակի կանոնաւոր կրթութիւնը: Մեզ համար նմանապէս մէծ նշանակութիւն ունի այն բանը, որ այս Սեմինարի Դիրեկտոր Պ. Ա. Կէօհերը աշխատում է ամենայն միջաց և յարմարութիւնը մասակարգել օտարազդի կանանց իւր ուսումնարանից զանազան կողմից օգուտ քաղելու: Առ այժմ օտարազգիներից այս Սեմինարիցուած կոմ մի Անդղիացւհի, երեք Ռուս օրիորդներ, սրոնցից երկու ար Պետերուրդից են, իսկ մէկը Վաշինգտոնից, երեք օրիորդ Ռումինիայի կառավարութիւնից այստեղ ուղարկած վարժապետութիւն սովորելու: մէկ Հունգարոցի օրիորդ, երկու Հայ կանանց և մէկ Հայ օրիորդ, այս վերջներում այստեղ եկաւ և մի Վարագի օրիորդ:

Գօթայի վարժուհեաց Սեմինարը (Անձնանը) և նորա բաժինները:

Գօթայի վարժուհիների Մեմինարի նպատակն է աղջկերանց փոքր հասակից մինչեւ հասունը այնպիսի կրթութիւն տալ, որ համարատասանէ նոր